«ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-Ը հայտարարում է մրցույթ՝ արվեստի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
.Անձը հաստատող փաստաթուղթ,
.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
.Ինքնակենսագրություն (Ձև 5),
.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից 15-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենան **դեկտեմբերի 4-ին** ՝ ժամը 13-ին, Սվերդլովի միջնակարգ դպրոցում:
Հասցեն՝ գ. Սվերդլով, 1-ին փողոց, 7-րդ փակուղի, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել (094) 76-78-79 հեռախոսահամարով: